Հաստատում եմ՝
Տնօրեն՝ Ա. Խոջայան
"01" 09 2023 թ

Դասղեկի տարեկան աշխատանքային պլան 2023-2024 ուստարի

Դասղեկ՝ Հայկանուշ Ճաղարյան

V ա դասարան

ԿՐԹԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ(դասարանի ընդհանուր բնութագիրը)

Դասարանը բաղկացած է տասնվեց հոգուց՝ 9 տղա, 7 աղջիկ, որից վեցը ունեն գերազանց առաջադիմություն, չորսն առաջավոր են: Դասարանի աշակերտները ակտիվ և համախմբված են ու համերաշխ: Նրանքօգնում են միմյանց ցանկացած հարցում, ակտիվորեն մասնակցում են հանրօգուտ աշխատանքներին: Դասարանում չկան դժվար դաստիարակվող աշակերտներ:

2. Ուսումնա-դաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում ՈՒստարվա ընթացքում դասարանի հետ տարվող աշխատանքների նպատակն է բարձրացնելաշակերտների ռազմահայրենասիրական դաստիարակության աստիճանը, նպաստել նրանց մտավոր կարողությունների, գիտելիքների, հմտությունների ձևավորմանը և զարգացմանը: ՈՒստարվա ընթացքում անցկացնել զրույցներ, էքսկուրսիաներ, հանրօգուտ աշխատանքներ: Անհատական աշխատանքների միջոցով նպաստել ուսման մեջ թերացող աշակերտների առաջադիմության բարձրացմանը: Աշակերտների մոտ ձևավորել բազմաբնույթ կարողություններ:

3.ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1 Հոգևոր դաստիարակություն Այս նպատակով կազմակերպել էքսկուրսիա դեպի մոտակահոգևոր մշակութային կենտրոններ: Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք քրիստոնեության նկատմամբ: Նույն նպատակով կատարել պատմական ակնարկ, որըկնպաստի հոգևոր դաստիարակության ձևավորմանը:

3.2 Գեղագիտական դաստիարակություն Աշակերտների մոտ ձևավորել գեղագիտություն և ճաշակ և բացատրել թե գեղեցիկը ինչ դեր ունի ներկայիս կյանքում: Անցկացնել զրույցներ, դասախոսություններ արվեստի տարբեր ճյուղերից, լսել աշակերտների կարծիքը այդ նյութի վերաբերյալ: Կյանքից բերել օրինակներ և կազմակերպել այցելություններ

մշակութային
օջախներ:
3.3 Ռազմահայրենասիրական դաստիարակություն
Հայրենասիրության կրթության
վերաբերյալ կազմակերպել քննարկումներ : Նշել մի շարք ֆիդայիների անուներ և թվարկելայն բնավորության գծերը, որտեղ ակներև է հայրենասիրությունը և ռազմարվեստ ձևերը:
3.4 Ֆիզիկական դաստիարակություն Դասապրոցեսին պետք է ցուցաբերոլ ակտիվություն : Բացատրել և պահանջել , որ աշակերտները հետևեն իրենց ֆիզպատրաստությանը: Կոձեն իրենց մարմինները ֆիզվարժությունների և հնարների միջոցով:
3.5 Աշխատանքային դաստիարակություն Աշակերտների մոտ ձևավորել սեր դեպի աշխատանքը և աշխատավոր մարդը: Տալ աշակերտներին այն գաղափարը , որ կարողանան զարգացնել աշխատանքային հմտություններ,աշխատանքին վերաբերվենբարեխղճորեն:
3.6 Բնապահպանական դաստիարակություն Պետք է կազմակերպել էքսկուրսիաներ դեպիբնության գիրկը և այդ ընթացքում թվարկել բնապահպանական մի քանի խնդիրներ , որոնք առկա են իրենց շրջապատում և այդ խնդիրը գլոբալ է:
3. Դպրոց-ընտանիք կապը Երեխաները պետք է հասկանան, որ ընտանիքը հանդիսանում էպետության կորիզը: Միևնույն ժամանակ գիտակցեն , որ պետք է սերտ կապի մեջ պահեն դպրոց ընտանիք կապը, որպեսզի աշակերտները ավելի լավ սովորեն:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՇԱԲԱԹ	ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ	ԿԱՏԱՐՈՂՆԵՐ
1	Նոր ուստարվա անելիքների ծրագրում	դասղեկ, աշակերտներ
2	Մարմնակրթություն, առողջապահություն: Հիգիենիկ հարցեր:	դասղեկ, աշակերտներ
3	Հայրենիք, ազգ, մայրենի լեզու:	դասղեկ, աշակերտներ
4	Անկախության անգնահատելի դերն ինձ համար:	դասղեկ, աշակերտներ
5	Խաղաղության մշակույթ:	դասղեկ, աշակերտներ
6	Հանդուրժողականության սահմանում:	դասղեկ, աշակերտներ
7	Անհանդուրժողականության դրսևորումները	դասղեկ, աշակերտներ
8	Ներողամտություն,թե վրեժխնդրություն	դասղեկ, աշակերտներ
9	Աշխարհընկալում: Ես հարգում եմ նաև քո կարծիքը: Փոխըմբռնում:	դասղեկ, աշակերտներ
10	Հոգու կրթություն և մտքի թռիչք:	դասղեկ, աշակերտներ
11	Ինչպե՞ս նայել ճշմարտության աչքերին:	դասղեկ, աշակերտներ
12	Առաջին կիսամյակի ուսումնական արդյունքների վերանայում:	դասղեկ, աշակերտներ
13	Ամանորյա ջերմ մաղթանքներ	դասղեկ,

	և բացիկներ:	աշակերտներ
14	Հայրենի'ք,ես զարկն եմ քո բազկի:	դասղեկ, աշակերտներ
15	Հայոց բանակ:	դասղեկ, աշակերտներ
16	Ազնիվ ու անկեղծ հարաբերությունները մեր դասարանում:	դասղեկ, աշակերտներ
17	Ինչպե՞ս չկորցնել հարազատ մարդկանց վստահությունը:	դասղեկ, աշակերտներ
18	Ո՞վ է իսկական ընկերը:	դասղեկ, աշակերտներ
19	Ո՞վ է իմ իդեալը:	դասղեկ, աշակերտներ

20	Ի՞նչ եմ ուզում դառնալ	դասղեկ, աշակերտնե
21	Իմ կարողություններն ու ձեռքբերումները:	դասղեկ, աշակերտնե
22	Դառն է ճշմարտությունը:	դասղեկ, աշակերտնե
23	Ի՞նչ է պատասխանատվության զգացումը:	դասղեկ, աշակերտնե
24	Ինչպե՞ս պայքարել անտարբերության դեմ:	դասղեկ, աշակերտնե
25	Ո՞վ է հոգեպես հարուստ իմ կարծիքով:	դասղեկ, աշակերտնե
26	Սերը որպես տիեզերական զգացմունք:	դասղեկ, աշակերտնե

17	Վատ սովորույթներ:Ինչպես պայքարել դրանց դեմ:	դասղեկ, աշակերտնե
18	Իմ կատարած ոչ ճիշտ գործերը:	դասղեկ, աշակերտնե
29	Իմ կատարած լավ գործերը:	դասղեկ, աշակերտնե
30	Հիշում ենք և պահանջում:Հույս և հավատ սեփական ուժերի հանդեպ:	դասղեկ, աշակերտնե
31	Հաղթանակների ամիս մայիս:	դասղեկ, աշակերտնե
32	Իմ երկիրը երեկ,այսօր,վաղը:	դասղեկ, աշակերտնե
33	Ոչ ոք չի մոռացվել:	դասղեկ, աշակերտնե
34	Իմ ձեռքբերումները այս ուսումնական տարում:	դասղեկ, աշակերտնե

ԱՇԽԱՏԱՆՔ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ

Ծնողական ժողովներ

Անցկացման օրը	Թեման	Քննարկվող հարցերը
Սեպտեմբեր	Նոր ուստարվա անելիքների ծրագրում	Զրուցել դասարանի բոլոր ծնողների հետ, ընտրել ծնողխորհրդի նախագահ, քննարկել հետագա անելիքները:
Նոյեմբեր	Աշակերտների առաջադիմությունը և կարգապահությունը	Հետևողական լինել երեխաների պատրաստվածությանը
Հունվար	II կիսամյակի անելիքների ծրագրում	Ինչպե՞ս միասին կազմակերպել II կիսամյակի անելիքները:
Ապրիլ	Աշակերտների առաջադիմությունը և կարգապահությունը: Տատեվերջյան էքսկուրսիայի քննարկում:	Հետևողական լինել երեխաների պատրաստվածությանը, առաջադիմությանը